ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«18» «սեպտեմբերի» 2024 թ. № 380-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՀՐԱԶԴԱՆԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2023-2032 ԹԹ. ԱՆՏԱՌԱՇԻՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ (ԱՆՏԱՌԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2023 թվականի դեկտեմբերի 20-ի ԲՓ №-0234-23 պետական փորձաքննական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թթ. անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլանը)՝ համաձայն հավելվածի:

2. Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած հնգօրյա ժամկետում ապահովել անտառաշինական նախագծի (անտառակառավարման պլանի) հանձնումը շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառային տնտեսության վարումն իրականացնել սույն հրամանի առաջին կետով հաստատված անտառաշինական նախագծին (անտառակառավարման պլանի) համապատասխան:

9/18/2024

X

ԱՐԱՄ ՄԵՅՄԱՐՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՄԵՅՄԱՐՅԱՆ Signed by: MEYMARYAN ARAM 2412830247 ԱՐԱՄ

18 «սեպտեմբեր» 2024թ.

ք. Երևան